

11246



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 15 » 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 218 - 24

Նախաձեռնող՝

«Առաթոռ» ՍՊԸ

Արմավիր ք., Վաղարշապատ, Վազգեն Առաքինի փ. 2, 41/5

Գործունեությունը՝ Արմավիր քաղաքի Հ. Բաղդամյան 39 հասցեում
նախադեսվող բնակելի թաղամասի կառուցում
Արմավիրի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՃԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 218 - 24

«15» հոկտեմբերի 2024թ.

**Արմավիր բնակավայրի Հ. Բաղրամյան փողոցի թիվ 39 հասցեում
նախատեսվող բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «ԱՌՄԹՈՒ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն,
նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝ «Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝ Արմավիրի մարզ, Արմավիր համայնք,
Արմավիր բնակավայր

Ներածական մաս. «ԱՌՄԹՈՒ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Արմավիրի մարզի Արմավիր բնակավայրի Հ. Բաղրամյան փողոց թիվ 39 հասցեում բնակելի թաղամասի կառուցում:

Նախկինում ստացված քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա գործունեության տարածքում հողային աշխատանքներն իրականացվել են ամբողջ ծավալով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N05022024-04-0057 վկայականը, Արմավիրի համայնքապետարանի կողմից տրված N17 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արմավիր համայնքի Արմավիր բնակավայրի Հ. Բաղրամյան փողոցի թիվ 39 հասցեում:



Բնակելի թաղամասի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել համաձայն «Վեոլիա Ջուր» ՍՊԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Բնակելի թաղամասի գազամատակարարումն իրականացվելու է Արմավիրի ԳԲԿ-ից Արմավիր և Բաղրամյան քաղաքները սնող մ/ճ գազատարից՝ համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Բնակելի թաղամասում կենտրոնացված ջեռուցում չի նախատեսվում, կիրականացվի լոկալ ջեռուցում:

Բնակելի թաղամասի ջրամատակարարման համակարգը կլինի փակուղային, ստորին բաշխման՝ պոմպերի մղման միջոցով: Կիրականացվի հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգ՝ համակցված ավտոկայանատեղիի հրդեհաշիջման համակարգի հետ:

Նախատեսված է ջրի ռեզերվուար՝ իր անձեռնամխելի հրդեհաշիջման պաշարով: Բնակելի թաղամասի ներքին սառը ջրամատակարարման ցանցը կիրականացվի պոլիպրոպիլենային de20-25 մմ և պողպատե 76- 57 մմ տրամաչափի խողովակներով: Ջրահեռացուման կոյուղու ներքին ցանցը կիրականացվի de50- 200 մմ տրամաչափի կոյուղու պոլիէթիլենե խողովակներով:

Բնակարաններում օդափոխությունը նախատեսվում է սանհանգույցից և խոհանոցների հովհարներից արտաձմամբ, նախատեսված է նաև բնական օդափոխություն:

Բնակելի թաղամասի ավտոկայանատեղիում նախատեսված է մեխանիկական դրդմամբ օդի ներածում և արտածում:

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում, արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում, օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով և այլն:

Կառուցապատման աշխատանքների ընթացքում կիրականացվեն հողային աշխատանքներ, հանույթը կկազմի 115150 մ³, հետլիցքը՝ 34600 մ³, ավելցուկային՝ 80550 մ³ հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Հողի բերրի շերտը կհանվի և կպահպանվի ծածկված վիճակում, շինհրապարակի տարածքում՝ բացառելով դրա աղտոտումը, որը հետագայում կօգտագործվի տարածքի բարեկարգման նպատակով:

Բնակելի թաղամասի կառուցման շինարարության ժամանակ կօգտագործվեն տարբեր շինարարական նյութեր՝ երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Անիվների վրացման, ջրցանի, բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստեռնով՝ պայամանագրային հիմունքներով, խմելու ջուրը շինհրապարակ կմատակարարվի ջրի տարաներով, խմելու ջուր վաճառող ընկերությունից՝ պայամանագրային հիմունքներով:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն 4 ժամանակավոր բիոզուգարաններ:



կապասարկվեն մասնագիտացված կազմակերպության կողմից և կապամոնիտաժվեն շինաշխատանքների ավարտից հետո:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ, համաձայն Կառավարության 2018 թվականի փետրվարի N108 որոշման պահանջներին համապատասխան: Նախատեսվում է տնկել՝ 117 թխկի սրտատերև կարմիր, 54 գնդաձև իլենի, 72 գնդաձեվ թույա, 36 բարբարիս, 48 ասպիրակ, 36 ֆորգիցիա, 81 խենոմելիս, սամշիտ՝ 1800 գժմ, 40 եղևնի կովկասյան, 1500 մ² թզուկ վարդեր, սիզամարգ՝ 11966 մ²:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումը իրականացվելու է ցնցուղային եղանակով, նախատեսված են նաև ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) վրա ազդեցությունները կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ: Աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կհանդիսանան՝ շինարարության փուլում հիմքերի փորման ընթացքում առաջացող փոշին և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ վառելիքի արտանետումները:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի, կենսաբազմազանության) պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ՝

- ավազի, ցեմենտի, գաջի, խիճի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի տեղափոխում՝ փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- շինարարական աղբի տեղափոխում դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր,
- շինարարական հրապարակի օրվա ընթացքում պարբերաբար ջրում՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս, շինհրապարակի ջրցանի համար լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումների օգտագործում,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում,
- շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար նախատեսված հատվածում ավազի կամ մանրախիճի տեղադրում, մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպում փոխված ավազի կամ մանրախիճի տեղափոխում համապատասխան աղբավայր և նորով փոխարինում, հողի բերրի շերտի պահպանում ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.11.2017թ.-ի թիվ



Պարճատարանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և քննարկումներն իրականացվել են Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի նիստերի դահլիճում: Հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արմավիրի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել կենսաբազմազանության մշտադիտարկումներ և առաջնորդվել ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշումների պահանջներով, իրականացնել պահպանության միջոցառումներ:
3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
4. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ համաձայն Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջներով:



աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԱՌՍԹՈՌ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Արմավիր բնակավայրի Հ. Բաղրամյան փողոցի թիվ 39 հասցեում նախատեսվող բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝  Խաչիկ Մարտիրոսյան



«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Նելլի Նասիրյան